ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2014թ. N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 400 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի «Հարկային մարմնի կողմից հարկ վճարողների (ապահովադիրների) վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» N 400 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրից և 1-ին կետից հանել «(ապահովադիրների)» բառը.

2) որոշման նախաբանից հանել «,«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ» բառերը.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. վերնագրից հանել «(ապահովադիրների)» բառը,

բ. 1-ին կետից հանել ««Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով,» և «(ապահովադիրների)» բառերը,

գ. 2-րդ կետի «ա» ենթակետում «հայտարարագրի» բառը փոխարինել «տարեկան եկամուտների մասին հաշվարկի» բառերով, իսկ «ե» ենթակետում «եկամտահարկ» բառը փոխարինել «եկամտային հարկ» բառերով,

դ. 2-րդ կետի «է» և 3-րդ կետի «բ» և «գ» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

ե. 4-րդ կետից հանել «(ապահովադիրների)» բառը,

զ. 5-րդ կետից հանել «(հայտարարագրերում)» և «(ապահովադիրների)» բառերը.

4) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝

ա. N 7 և N 10 ձևերում «եկամտահարկ» բառը փոխարինել «եկամտային հարկ» բառերով, իսկ «եկամտահարկը» բառը՝ «եկամտային հարկը» բառերով,

բ. NN 9, 11 և 12 ձևերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**